Եթէ պսակուես—հասարակութեան մէջ դիրք բռնելու նպատակով՝ ոչ թէ կին, այլ աղջիկ-պարոն կունենաս։

Կինը քեզ կսիրէ, տան տիկինը կյարգէ, աղջիկ-պարոնը եօլայ կը տանէ։

Կինը քեզ համար կլինի, տան տիկինը ընտանիքի ու բարեկամների համար, աղջիկ պարոնը հասարակութեան ու հիւրերի համար։

Կինը կլսէ խորհուրդներդ, տան տիկինը գլխիդ կակալ կկոտրէ, աղջիկ-պարոնը քեզ մարդու տեղ չի դնիլ։

Հիւանդութեանդ ժամանակ կինը կխնամէ, տան տիկինը երբեմն-երբեմն կայցելէ, աղջիկ-պարոնը մարդ կուղարկէ առողջութիւնդ իմանալու։ Կինը զարդից մանեակից կլինի, տանտիկինը փողերդ ծախսելում, աղջիկ-պարոնը պարտքերդ կաւելացնէ։

Երբ մեռնես՝ կինը կողբայ քեզ, տան տիկինը կխղճայ, աղջիկ-պարոնը սեւեր կըհագնէ։

---

Մի փիլիսոփայի հարցրին ինչ բանն է ամենագեղեցիկը. պատասխանեց—աշխարհը։ Ո՞ր բանն է ամենամեծը—տարածութիւնը, որ ամեն բան բովանդակում է իր մէջ։ Ի՞նչն է ամենից արագը, պատասխանեց—միտքը։ Ո՞ր բանն է ամենից զօրաւորը—կարգը, որովհետեւ ամեն բանի յաղթում է։



---

Պարսկական գրքերից «կանանց մասին»։

---

Խելօք կինը իր ամուսնու հայեացքից հասկանում է նրա սրտի ցանկութիւնը, և իմաստուն կարգադրութեամբ՝ նա ապահովում է իր տան բախտը և հանգստութիւնը։

Երկու գոյութեան, փոխադարձ սիրոյ կապով կապուածներ, իրանց ազատ են զգում փոփոխուող ճակատագրի դաւաճանութիւնից և երջանկութեամբ տանում են նոքա այն կարճ ժամանակամիջոցը, որը կազմում է—մարդկային կեանք։

Աղքատութիւնը թէև շատ անգամ կարող է նոցա հարուածել, բայց իրանց փոխադարձ սիրոյ շնորհիւ, նոքա հեշտութեամբ կրկին հարստութիւն ձեռք կբերեն։



## V. ԲԺՇԿԱԿԱՆ

**Ծովային հիւանդութեան դէմ.**—Վերջին միջոցը Natrum bromatum-ի փոշին է, որից մի բաժակ ջրի մէջ, մէկ թէյ դգալ խառնելուց յետոյ, շոգենաւ նստելուց առաջ խմելու է։ Եթէ նաւի վրայ կրկին սրտի խառնուիլ սկսուի, այս դեղը երկրորդ անգամ կրկնելու է. այնուհետև այլևս ոչինչ չի պատահի։

—

**Ընդհատ — դողի** (перемежающ. лих.).—**դէմ հասարակ միջոց**, որը ոչ թէ միայն անվնաս է, այլ և հեշտ է պատրաստւում և թէ մեծ աջողութեամբ Վենգրիայում և Ամերիկայում գործադրւում է։ Միջոցը այս է. մի բուռն ծեծած հասարակ աղը, պէտք է նոր թաւի (сковорада) մէջ ածել և այնքան ժամանակ բովել, մինչև որ ինչպէս սուրճ սևանայ։ Այս դեղը, դողացնելու երկրորդ օրը պէտք է խմել և այն էլ անօթի։ Իսկ եթէ այս դեղից ծարաւ զգացուի, որքան կարելի է քիչ քանակութեամբ ջուր խմելու է և այն էլ կաթիլ, կաթիլ։ Հետևեալ օրերն ևս թեթև կերակուրներ ընդունելու է, ինչպէս կաթը, բուլյոն և թեթև խաշած ձու։ Հիւանդութեան նշանները, փոքր առ փոքր անհետանում են և այս դեղից մի քանի անգամ ընդունելուց, դողն ընդ միշտ անհետանում է։

—

**Հարբուխի դէմ փորձուած դեղ.**—Գազարի (морковь) արմատը ջարդելուց յետոյ, մաքուր շորով քամելու և այդ ջրից թէյի գդալով, քթին մօտեցնելով դէպի քունքը, ուժով ներս շնչելու է։ Երկրորդ կամ երրորդ անգամ, այս միջոցը գործադրուելուց յետոյ, հարբուխը բոլորովին բժշկւում է, ինչպէս և փորձուած է։

—

**Զկռտալու դէմ միջոց.**—Զկռտալը թէպէտ մի առանձին հիւանդութիւն չի առաջացնում, միայն բաւականին անհանգստութիւն է պատճառում, որը շատ անգամ հեշտ չէ անցնում։ Հասարակ միջոցներով ևս յաճախ չի կտրւում, բայց այս միջոցը (փորձուած) շուտ է ներգործում։ Երբ առաջին անգամ զկռտալը սկսուի թէ չէ, պէտք է սրտի գդալից մի փոքր բարձր, կրծոսկրին (клетки) վրա հարել, որով զկռտալը անմիջապէս անցնում է։

—

**Ձեռքերի ճաքճքուելու դէմ.**—Եթէ ցրտից կամ տաքից ձեռքերի կաշին ճաքճքի, ամենալաւ միջոցը կիտրոնի հիւթ քսելն



է, իսկ առաւօտները մինչև ձեռքերը լուանալը, օգտակար է, որ սպիտակ վազելինով հարուի։

—

**Երեխայի աղիքների մէջ որդներ գտնուելու նշանները հետևեալն են.**—Երեսի գունատուիլ, մարած—հանգած աչքեր, միշտ քիթը քորում է, լեզուն աղտոտ, շնչառութիւնը գարշահոտ, քթից արիւն է հոսում, ախորժակը, նուազում է կամ շատակեր է լինում, միշտ քնելու ցանկութիւն է զգում, քունը անհանգիստ և քնած ժամանակը ատամները կրճտացնում է. վերջապէս մարմնի ընդհանուր թուլութիւն և մաշուիլ է նկատւում։

—

**Ատամների պահպանումը և բերանի մաքրութիւնը.**—Ամենից առաջ, պէտք է ատամների վրայի կեղտը — աղտը մաքրել, փչացած ատամները և նրանց արմատները հեռացնել, կերուած—ծակուածները կօծել (պլօմբիրավատ) և ամեն օր բերանը մաքուր ջրով ողողել. ուտելուց յետոյ, ատամների մէջ եղած կերակրի մնացորդները մաքրել ատամնափորիչով, յետոյ ատամները մաքրել կաւիճով, որ քիմիականապէս լինի մաքրուած, իսկ ատամները ողողելու ջրին աւելացնել մի բաժակ ջրին 20 կաթիլ Rp. Ac. Corbolici 4'0. Tin menthae pip. 30,0։ Այս կերպով ատամները կարգին կմաքրուի, իսկ մի որ և է փոշիով միայն մաքրելը, ոչինչ չի օգնի։

—

**Հնացած խաղաթղթերի գործածութեան վնասը.**—Նանտ քաղաքի հիւանդանոցի բժիշկ Բապպէնը, քննելով, կառապանների սրճարաններում գործածած խաղաթղթերը, այդ թղթերից —«ագռաւի աղջկայ» վրայ նկատեց, որ նրա ամեն մի սանտիմետր քառակուսի վրայ, միջին հաշուով 6,160 կարգը, բակտերիաներով լի է, որոնց մէջ գտնւում էին, թոքախտի բացիլներ և այլ հիւանդութիւններ առաջացնող միկրօօրգանիզմներ։ Բապպէնի կարծիքով, այսպիսով շատ շուտ կարելի է վարակուել, մանաւանդ խաղալիս, մատներին լորձունքը գործածելիս։ Բապպէնի կարծիքով, վարակուելուց ազատուելու, միակ միջոցը, այսպիսի թղթերը երեք, չորս անգամ խաղալուց—գործածելուց յետոյ, պէտք է ոչնչացնել կամ կարգին ախտահանել։

—

**Կարեմեքենայից հիւանդանալը.**—Առաջանում է միշտ կծկուած—երկար ժամանակ կռացած նստելուց, որը շնչառութիւնը և գլխի մանրաերակների մէջ արեան շրջագարձը դժուարացնում է, որից, շատերն ստանում են գլխի ցաւ, սրտի թռթռոց, թոքախտ և արեան նուազումն։ Մի այլ կողմից ևս, նրանից է վնաս գալի որ ոտքերը միշտ միատեսակ շարժման մէջ են, որից ոտքերի կծկումն (судорогъ) է առաջ գալիս, նոյնպէս ոտքերի անդամալուծութիւն, ողնաշարի զգացումն և իստերիկայ։ Վերջապէս մշտական միատեսակ չրխչրխկոցը, լսողութիւնը դադրացնում է և ջղային գրութեան զգացմանը ներգործում։

# VI. ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

**Կերակուր ուտելու կանոններ.**—Համռում գլխնական Գրադին անմիտա և լաւ ուտելու 13 կանոններ գրեց, որը հետևեալն է 1) Որքան կարելի է պէտք է աշխատել որ որոշեալ ժամերին ուտել։ 2) Թոյլ կազմուածք և անխորժակ չունեցողները, պէտք է այն ժամանակ ուտեն երբ քաղցած են, այն էլ շատ շատ, քիչ, քիչ, բայց ոչ թէ միանգամից։ 3) Հանդարտ ուտելու է և ամեն մի պատառը լաւ ծամելով։ 4) Ստամոքսի հեշտ մարսելու համար, ամեն մի ուտելուց 3—4 ժամ ժամանակամիջոց անցնելուց յետոյ պէտք է ուտել։ 5) Սառը կամ տաքը, չպէտք է իրար հետևից խառնել։ 6) Ուտելուց յետոյ, մի փոքր հացի չոր կեղև ուտելու է, որը օգնում է մարսողութեանը և ամեն տեսակ ատամնային փոշիներից անհամեմատ, աւելի լաւ է մաքրում ատամները։ 7) Զայրացած և մտքով վատ տրամադրութեան ժամանակ, ուտելու չէ։ 8) Սեղան նստած ժամանակ կարդալուց և ամեն տեսակ մտաւոր զբաղմունքից խույս տալու է։ 9) Որքան կարելի է ուրախ և համակրելի մարդկանց հետ ճաշելու և նրանց հետ դուրալի գործերի մասին խօսելու է։ 10) Սեղանից վերկենալուց յետոյ ցնցող և գռգռող (порывистыхъ) շարժումներ անելու չէ։ 11) Այնքան միայն ուտելու է, որպէս զի քաղցը յագեցնուի, այլ երբեք [illegible] բեռնաւորելու չէ։ 12) Ինչ կերակուրի որ ախորժակ չլինի, ուտելու չէ։ 13) Ուտելուց թէ առաջ և թէ յետոյ, ամեն տեսակ վեճերից փախչելու է, որովհետև վիճելը ստամոքսի համար միևնոյն է, ինչ որ մի կծիծ թելը քօրօցների հետ կուլ տալը։

—

**Սրճի ազդեցութիւնը աչքերի վրայ.**—Ինչպէս յայտնի է մաւրները, շատ սրճասէր են, մանաւանդ նրանց վաճառականները, որոնք շուկաներումը գրեթէ ամբողջ օր, սրճի բաժակից չեն բաժանում։ Միայն թէ նրանց վրայ արուած փորձերից յայտնուեցաւ, որ այս սրճասէրների տեսութիւնը (աչքերի) 40—45 տարեկան հասնելուց—հասակում, սկսում է թուլանալ, և 50 տարեկան հասակում արդէն նրանցից մեծ մասը կուրանում են։ Երևի հենց պատճառը այս է որ Մարոկօյի Ֆէց քաղաքի—փողոցներում, անհագին քանակութեամբ կոյրեր են շրջում։

Այս հիւանդութիւնը վերագրում են, անչափ սուրճ գործածելուն և ինչպէս «Մօսկովսկ. Վեդ.» լրագիրը գրում է, այնտեղ բնակւող եւրոպացի բժիշկները նաև, այս կարծիքը հաստատում են։

—

**Կեղծ ճշմարտութիւն.** — Մի ժամանակ զուտ ճշմարտութիւն էին ընդունում, որ երբ չափազանց ժուժ-



կալ կեանք վարելուց երիտասարդները հիւանդանում են։ Այժմ Նորվենգիայի բժշկական ֆակուլտէտը այս հարցի մասին հետևեալը պատասխանեց.— Վերջերս ամեն կողմից այնպիսի կարծիքներ էին յայտնում, որ բարոյական կեանքը և սեռական ժուժկալութիւնը, իբր թէ առողջութիւնը վտանգում է։

Իսկ մենք փորձերի հիման վրայ, միաձայն ընդունում ենք, որ այս կարծիքը անհիմն է և բարոյական կեանք վարելուց, վնասուելու կամ հիւանդանալու, ոչ մի դէպք մեզ յայտնի չէ։

—

**Վատ սովորութիւն.** — Որպէս զի ծծմայրերի և ստնտուների կաթը աւելի առատ և պարարտ լինի, սովորաբար, նրանց գինի, գարեջուր և յաճախ օղի են խմացնում։ Այս վատ սովորութեան պատճառաւ մանուկները հիւանդանում են, որովհետև վերոյիշեալ խմելիքների գլխաւոր բաղադրութիւնը ալքօհօլն է, որը մնում է ստնտուի կաթի մէջ, և նրանից կաթի հետ անցնում է մանկանը, որից մանուկը անքնութիւն է ունենում, գրգռուած դրութիւն և շատ անգամ ջղերի լարումն։ Այս հիւանդութեան հետևանքն շատ անգամ լինում է խորը քուն մտնել, և այդ նշանների կրկնուելուցը թունաւորուիլ և մահ։

Այն մայրերն ևս, որոնք իրանց երեխաներին իրանք են կաթը ջամբում, այս հանգամանքը պէտք է լաւ յիշեն։

—

**Մտաւոր զբաղմունքի ազդեցութիւնը շնչառութեան վրայ.**—Վաշինգտօնի ժողովրդական ուսումնարանների աշակերտների կրծոսկրը, քննելուց յայտնուեցաւ, որ այն աշակերտների շնչառութիւնն է թեթև, որոնք երկար ժամանակ մտաւորապէս լարուած դրութեան մէջ են լինում։ Այսպիսով թթուածնի որոշեալ չափը, դժուարութեամբ է մտնում արեան մէջ։ Այս իսկ պատճառով մտաւոր զբաղմունքի ժամանակ, յաճախակի զկռտալը—օռշալը հետևանք է, այն ֆիզիօլօգիական գործունէյութեան՝ որով թոքերին, օդի հետ հասցնում է նաև հարկաւոր եղած թթուածինը։



# VII. ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ

**Ֆիլօկսերիայի դէմ նոր հնարք.**—Բուրգոնդիայում մի այգեպան նկատեց, որ ամբողջ այգու վազերից, միայն այն վազն էր ողջ մնացել ֆիլօկսերիայի աւերմունքից, որի շուրջը կարսոն (պետրուշկա) էր ցանուած։ Առհասարակ կարսոնի հոտը միջատներին անտանելի է և դրա համար չեն մօտենում։ Այս հնարքը թէ ամենքին մատչելի է և թէ շատ աժան, որով ամենքը հեշտութեամբ կարող են փորձել։

—

**Պտղատու ծառերին վնասող միջատներին հեռացնելու** ամենահեշտ միջոցը, ծառի յատակին կարբօլեան թթուով թաթախուած—թրջած բամբակ փաթաթելն է։

—

**Ծառերի և ծաղիկների տնկելու ամենալաւ ժամանակը**՝ արևի մայր մտնելու միջոցին է։

—

**Թառամած բոյսերին կենդանացնելու** ամենալաւ միջոցն համարւում է նաև (մեծ մասամբ 45—50% ըէօմ. աստիճան տաքութիւն) տաք ջրով բոյսերին ջրելը։

—

**Իւղ հարելու հեշտ միջոց.**—Թանձր սերը—արաժանը ջրի սպիտակ շշի (գրաֆինի) մէջ ածել և յետոյ շշի բերանը, մաքուր քաթանով պատած խցանով խցել և սկսել հարել։ Երբ կարագը պատրաստ լինի, դառը նշից հանած կաթնախառն աղաջրով և մի փոքր մաս նիախուր խառն, լուանալու է։

—

**Թարմ ծաղիկները մի քանի ամիս պահելու հնարք.**—Այդ՝ ոչ թէ միայն միսը և այլ պտուղներ է պահում երկար ժամանակ առանց փչանալու, այլ նաև ծաղիկներ։ Հնարքը հետևեալն է, որը մի ամերիկացի պարտիզպան է գտել։ Պէտք է հասարակ ծեծած աղը առաջ չորացնել վառարանի վրայ, յետոյ կրկին ծեծել շատ բարակ և ածել թիթեղի (ժեշտի) արկղի յատակում, որտեղ և պէտք է դարսել կտրտուած-նոր ծլած և դեռ չբացուած ծաղիկներ կամ վարդերը իրանց փոքրիկ ճիւղերով։ Եւ պէտք է այնպէս դարսել, որ միմեանց չկպչեն, չդիպչեն և նրանց վրայ կրկին աղ ցանել այնքան, մինչև որ արկղը լցուի, յետոյ արկղը այնպէս պինդ պէտք է ծածկել, որ օդ չանցնի։ Այսպիսով պահելու ծաղիկները, մի քանի ամիս կարելի է պահել և հեռու տեղ ուղարկելիս և չեն փչանայ։ Իսկ երբ հարկաւոր լինի արկղը բաց անելու, այն ժամանակ չորացած ծաղիկներից ճիւղերը կտրտելով, ջրի մէջ են ածում, որից մի քանի րոպէից յետոյ շուտով բացւում են և այնպիսի թարմ տեսք ստանում, իբր նոր քաղած։

—

**Կարտոֆիլը ծլելուց և մինչև ամառուայ վերջը պահելու**



**համար**—խորհուրդ են տալիս լուացուած կարտոֆիլները, մի փոքր մաս աղ խառնած եռացրած ջրի մէջ, 4 վայրկեան թողնել։ Սրանից յետոյ անմիջապէս հանելով ջրից կարտոֆիլները, պէտք է չորացնել և պահել հով և մութ տեղ, միայն թէ իրար վրայ շատ կիտուած չլինին։

—

**Նունուֆարին արհեստական գոյն տալու համար** (Անիլինովի) ներկի մէջ նունուֆարի ծաղկած փունջ են դցում։ Այս տեսակ արհեստական ներկելուն, Փարիզի այգեպաններն ևս մեծ քանակութեամբ են գործադրում։

—

**Պտղատու ծառերը սաստիկ ցրտից, վնասակար միջատներից և որդներից ազատ պահելու համար**, ծառի արմատին կրից, ջրից և մի փոքր մաս կաւից միմեանց հետ հարած և կազմած խառնուրդից պէտք է քսել, որը ձմեռը և գարնան արևի տաքութիւնից գոյացած ծառի հիւթին նաև պաշտպանում է վտանգուելուց։

—

**Խնձորները թարմ պահելու հնարք.**—Չոր ներքնատանը մաքուր և չոր տախտակների վրայ պէտք է շարուի այնպէս, որ միմեանց կպած չլինին և շատ-շատ, զգուշութեամբ մաքուր սրբիչով (չոր) սրբելու է։ Միայն թէ խնձորները, ծառից պէտք է ձեռքով քաղել և այն էլ զգուշութեամբ, որպէս զի չջարդուին կամ չփչանան։

—

**Նիհրացած ձիուն գիրացնելու համար.**—Գարնանը թխենույ ծառի (բերիօզա) նոր ծլած տերևները հաւաքում են, արևի ստուերի տակ չորացնում, ջրի մէջ եփում—թրմոց շինում և անօթի խմացնում կենդանուն, որը այս ժամանակ և առատ կերակրուելով սկսում է կազդուրուել։



# VIII. ԳԻՒՏ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

**Ժանտախտի իսկական դեղը.**—Պաստեօրի աշակերտ պրօֆ. Երսէնը, ոչ թէ միայն ժանտախտի բացիլն է գտել, այլ նաև այդ բացիլլին սպանող—ոչնչացնող հեղանիւթը, որով ժանտախտով հիւանդացածին, կաշու տակ սրսկելով, առողջացնում է։ Եւ վերջին փորձերը ցոյց են տալիս, որ 27 հոգուց 25-ն, անպատճառ բժշկւում է այդ միջոցով։

—

**Չծնուած երեխայի սեռը, առաջուց գուշակելու փորձը,** անցեալ տարի Տեօնտենօնտ գտնուած ճառագայթների միջոցով քննուեցաւ, յղի կանանց վրայ և յայտնուեցաւ որ մօր արգանդում գտնուած և դեռ չ՚ծնուած երեխայի սեռը, ճիշտ որ, ծնուելուց շատ առաջ կարելի է անսխալ որոշել։ Միայն յղութեան վերջին ժամանակամիջոցում աւելի հաստատ է որոշւում։

—

**Շերամի որթի սեռը գանազանելը,** նոյնպէս Ռեօնտգենի ճառագայթների շնորհիւ գտնուեցաւ որով շերամի որդի մինչև թիթեռ դառնալը կարելի է սեռը որոշել։ Այս հանգամանքը շերամապահներին միջոց կ՚տայ, ոչ թէ իգական սեռի՝ այլ թէ արական սեռի որդներ պահել, որոնք աւելի շատ են բազմանում հետևապէս և օգտակար են։

—

**Թոքերի բորբոքման դեղի գիւտը.**—գիտնական բժիշկ Դենիսը, թոքերի բորբոքումը, պատուաստման միջոցով բժշկելու նոր գիւտն արել է, և այդ մասին յայտնել է, Բելգիայի Անտուերպէն քաղաքի բժշկական ժողովին։

—

**Ֆիլօ՛կսերեան՝ ելեքտրականութեամբ բժշկելու գիւտը.**—Էլբա կղզում բնակւող մի գերմանացի, այդ միջոցով այգիները հիմնաւորապէս բժշկում է։

—

**Երկաթուղով ճանապարհորդելու յարմար գործիք.**—որը գնացքի շարժման ժամանակ, վագոնների մէջ բարձրաձայն յայտարարում է, առաջիկայ կայարանի անունը։ Այս գործիքը վերջերս Լոնդոնում գործադրեցին, որով շատ անախորժութեանց առաջն առնում է, ինչպէս և շատ անգամ պատահում է, որ սխալմամբ անցնում են նշանակուած կայարանը, մանաւանդ գիշերները։

—

**Բռնկուած (վառուած) նաւթը հանգցնելու հնարք.**—Նաւթի բռնկուելուց առաջացած դժբախտութիւնները օրից օր աւելանում են, սրա համար անհրաժեշտ է, որ ամեն տան մէջ պատրաստի պահուի շիշով նշադրի սպիրտ, որը նաւթի բռնկելուն պէս վրան լցնուի, որի ամիաքի շոգին անմիջապէս կրակը կհանգցնի։ Այս հնարքը և ուրիշ հանգամանքներում կարելի է գործադրել, առաւելապէս խոհանոցներում, որտեղ միշտ կրակ է լինում և որտեղ լամփեքն են մաքրում և վառում։

—

**Պտուտակները (վինտեր) մի քանի տարի շարունակ չը ժանգոտելու համար**—պէտք է նախ քան ամրացնելը վրան, ձէթի մէջ խառնած գրաֆիտ քսել։

—

**Ժանգոտած պտուտակները հեշտութեամբ քանդելու համար**—պէտք է երկաթէ ձողը դնել կրակին և երբ կարմրեց—շիկացաւ, դրա ծայրը 2—3 րոպէ պէտք է դնուի, ժանգոտած պտուտակի գլխին, որից պտուտակը կտաքանայ և հեշտութեամբ կհանուի։

—

**Թաւիշեայ գործուածքներից (բարխատ) իւղի բիծը հանելու համար.**—Մետաքսեայ բարակ գործուածքից կարած պարկի մէջ տաքացրած, բարակ և մաղած աւազ են լցնում, և այդ պարկով գործուածքի աղտոտ տեղը այնքան հարում, մինչև բիծը անհետանում է. իսկ յետոյ խաւը (ворсъ), մաքուր վրձինով ուղղում են։

—

**Մկներին ջնջելու համար**—դառը նուշը բարակ ծեծիր, ալիւրի և շաքարի հետ խառնիր. ածա ամանի մէջ և այն տեղերում դիր, որտեղից մկները դուրս են գալիս։ Մկներից ազատուելու և մարդկանց չվնասող, ամենալաւ միջոցներից մինն էլ այս է։

—

**Տանու կահ-կարասիքի (մէբելի) գործուածներից բիծը հանել.**—Թաժա թխած (բուլկի) հացը վառարանի մէջ են դնում և երբ տաքացաւ՝ կտրում են և դրանով բծի տեղին քսում—հարում և այսպէս այնքան ժամանակ շարունակում, մինչև որ բիծը անհետանայ։

—

**Ներքնատան պատերի բորբոսը ոչնչացնելու հա-**

մար—ամենից լաւ է վերցնել «դվու սերնօկիսլիյ» կիրը (двусѣрнокислую извѣсть) լուծել ջրի մէջ և ապա պատերին քսել, իսկ երեք օրից յետոյ, պատերը կրաջրով ծածկել։

—

Ծաղկեայ գործուածներից թանաքի բիծը հանելու կերպ.—Եթէ բիծը նոր է, շատ հեշտութեամբ է հանւում, որը սապնաջրով լուանալուց յետոյ, բիծը ջրախառն աղա-թթւուտով (соляная кислота) թրջում են։ Հնացած բծի համար, աղաթթւուտը աւելի է հարկաւոր խառնել. միայն առաջուց պէտք է փորձել։ Սպիտակ բամբակէ և վուշէ գործուածներից, թանաքի բիծը դուրս է հանւում շչաւելեան թթւուտով։

—

Մրջիւններին հեռացնելու միջոց.—Պահարանների մէջ յայտնուած (կամ այլ տեղ) մրջիւններին հեռացնելու համար, մի կտոր քափուրը (camphora) թաց փալասի մէջ փաթաթած, մրջիւններ գտնուած տեղում դնելու է։

—

Կտուրի մաղից աղտոտած շորերը մաքրելու համար, մաքուր և թաց կտորով քսելու է, որը անմիջապէս մաքըրւում է. իսկ մրձինով շատ դըժուարութեամբ է փչրւում։

—

Բռնկած նաւթը կաթով հանգցնելու փորձ.—«Cosmos» ամսագիրը յայտնում է, որ բռնկուած նաւթը հանգցնելու համար, կաթն աւելի լաւ միջոց է քան՝ ջուրը։ Այս պատահմամբ նկատուած իրողութիւնը և փորձով յաջող հետևանք ունեցաւ։

—

Շաքարի յատկութիւնը ճանաչելու հնարք.—Լաւ շաքարը վատից հեշտ է զանազանւում նրանով, որ շօշափելիս պինդ է, ձայն է հանում, լաւ է բիւրեղացրած, փայլուն է, ջրի մէջ ուշ է հալւում և հալուելուց յետոյ գիրտի հետք չի թողնում։ Վատ շաքարը կոտրտելիս, ընդհակառակն փըշրւում և կտոր կտոր է լինում, կարգին չէ լինում բիւրեղացրած, նրա գոյնը սպիտակ է, դեղնախառն, և եթէ խոնաւ տեղ պահուի—մնայ, շուտ է հալւում և ջրի յատակին գիրտ է նստում։

---

## ԷԴԻՍՈՆԻ ԵՐԿՈՒ ՆՈՐ ԳԻՒՏ

—

«New York Herald»-ը հաղորդում է Էդիսոնի մի նոր կարևոր գիւտը։ Ամերիկացի այդ մեծ հնարագէտը ասել է, թէ ինքը համոզուած է, որ Ռենտգենի ճառագայթների միջոցով հնարաւոր կը լինի կոյրերին բժշկել, ի բաց չառած և այն կոյրերը, որոնք աչքերից զրկուել են, միայն թէ հարկաւոր ջիղը խանգարուած չլինի։ Երկու կոյրերի վրայ կատարուած փորձերն, ըստ երևոյթին, աջողութիւն են ունեցել։ Էդիսոնը մտադիր է իւր ամբողջ ուշադրութիւնը նուիրել այդպիսի փորձերի։



Էդիսոնի մի ուրիշ նոր գիւտը կոչւում է «աւտոտելեգրաֆ». դրա միջոցով հնարաւորութիւն է հանդիսանում հեռագրաթելով անհագին տարածութեան վրայ հաղորդել ամեն տեսակ նկար, կատարելապէս համոզուած լինելով, որ նկարը կէտ առ կէտ ամենայն ճշտութեամբ կը վերարտադրուի հեռագրաթելի միւս ծայրին։ Այդ գիւտը կարող է կատարեալ յեղափոխութիւն ձգել պատկերազարդ թերթերի մէջ։ Ահա թէ ինչ է ասում իւր այդ նոր գիւտի մասին ինքն Էդիսոնը. «Այս գաղափարը չի կարելի անպայման նոր անուանել. դա աւելի շատ Կասսելի սիստեմի կատարելագործումն է։ Ես աւելի վաղ էի ձեռնարկել կատարելագործելու այդ գործիքը, բայց երբ հեռախօսը յայտնուեցաւ, ստիպուած էի դրան նուիրել ժամանակիս մեծ մասը։ Միայն մօտերս միտք յղացաւ, որ Կասսելի գործիքի կատարելագործումը կարող էր պէտք գալ թերթերին։ Հէնց նրանց համար էլ նշանակուած է իմ նոր գործիքը։ Պէտք է ասեմ, սակայն, որ ոչ մի լրագիր մենաշնորհ չի ստանալ իմ աւտոֆոտոգրաֆը գործադրելու համար։ Մենաշնորհն ինձ եմ վերապահել և գործիքը կծախեմ ամեն մի հրատարակչի վրայ։ Գործադրութիւնը շատ հասարակ է։ Նկարիչն իւր նկարը գծագրում է սովորական կերպով, նկարը փաթաթւում է գլանի վրայ, որ գտնւում է գործիքի գլխին, հուպ է տալիս կոճակը և այն րոպէին, երբ գործիքը շրջան է կատարում, նկարը վերարտադրւում է նշանակուած տեղում։ Գործիքն այժմ կատարելապէս պատրաստ է, բայց, նախ քան նրան ծախու հանելը, ես կաշխատեմ այնքան փոքրացնել նրա գիրքը, որ կարելի լինի գրպանում ման ածել, դնել նրան հեռագրական ամեն տեսակ սեղանի վրայ և համապատասխան նկարը հաղորդել նոյնքան հեշտ կերպով, ինչպէս այժմ հաղորդւում է 200 բառից բաղկացած հեռագիրը։ Գործիքը ծախու կհանուի յունուարի վերջից ոչ ուշ։ Հաւանական է, որ գործիքս ձեռք կբերեն միայն ամերիկական և եւրոպական մեծ թերթերը։ Մինչև այժմս կատարուած փորձերից երևում է, որ ամենամեծ դիւրութեամբ նրանից կարելի է օգտուել 500 մղոն տարածութեան վրայ, իսկ 1000 մղոն տարածութեան էլ նկարը բաւարար չափով ճշտութեամբ կվերարտադրուի։ Ես մտադիր եմ շուտով փորձել իմ գործիքը Հիւս. Ամերիկայի Նիւ-Իօրկ և Սան-Ֆրանցիսկո քաղաքների միջև»։

Էդիսոնի «աւտոֆոտոգրաֆը» չահաւէտ կլինի նաև առևտրական ասպարիզում։ Վաճառականը փոխանակ նամակով, կարող է Էդիսոնի այդ նոր գործիքով ցոյց տալ գործարանատիրոջը, իւր պատուիրած նոր կտորի նմուշը։



Թափանցող ճառագայթներ գտնող

ՊՐՕՖ. ՌԵՕՏԳԵՆԸ

# IX. ՏԱՆՏԻԿԻՆ

**Տան կահ-կարասիքը** (մէբել) **ճանճերի և այլ բծերից մաքրելու համար** — նաւթի մէջ թրջած փալասով պէտք է սրբել։ Թէև իւղով էլ կարելի է մաքրել, բայց իւղով սրբելուց յետոյ, եթէ լաւ չ'չորացնուի՝ բծեր են մնում, մինչդեռ նաւթից երբէք բիծ չի մնում։

—

**Լամփի կամ այլ ապակեայ ամանները որպէսզի չուտ չճաքուին և դիմացկուն լինին**—պէտք է այսպէս պատրաստել.—Յարդի մէջ փաթաթելով ապակեայ ամանները դարսում են պղնձի մէջ, վրան սառն աղաջուր լցնում, յետոյ պղինձը կրակի վրայ դնում և թողնում այն քան ժամանակ մինչև ջուրը եփ գայ, որ կէս ժամից պակաս չլինի։ Սրանից յետոյ պէտք է թողնել, որ ջուրը սառի, որից ամանները հանելով ողողում են օղիով և ապա մաքրում սրբիչով։

—

**Սառած ձուն, մրգեղէնը կամ կանաչեղէնը,** աղաջրի մէջ ձգելով՝ կարելի է թարմացնել։

—

**Միսը, իւղը և այլն թարմ պահելու համար,** պէտք է կաղամբի թարմ տերևների մէջ փաթաթել։

—

**Ապակեայ ամաններից նաւթի հոտը ոչնչացնելու համար**—պէտք է մի փոքր մաս խլորիստի կալցիան, կրաջրի հետ խառնել և դրանով ամանները լուանալ։

—

**Սեղանի աղը խոնաւութիւնից պահելու համար**—պէտք է աղին մի փոքր մաս չը փչրած օսլա (կրախմալ) խառնել. օրինակ մէկ գրուանքայ աղին 4 կամ 5 մսխալ օսլա։

—

**Փայտոջիլների դէմ հընարք.**—Ցրդի կամ սեաւդի խոտի, (որ լատիներէն Suniperus Sabina և ռուսերէն Казачьяго можжевельника է անուանւում) տերևները և ճիւղերը պէտք է լցնել-ածել օղու մէջ և 8 օր տաք տեղում թրմոց դնել։ Այս տեսակ

պատրաստած հեղուկը փայտօջիլներին և թէ այլ և այլ միջատներին ընդմիշտ հալածում է։

—

Ջրի յատկութիւնը իմանալու համար,—կէս լիտրանոց (երկու բաժակի չափ) ապակեայ մաքուր ամանի մէջ լցնում են, փորձելու ջրից $^3/_4$ մասը, որի մէջ մի թէյի գդալ, մաքուր սպիտակ ծեծած շաքար հալելուց յետոյ՝ պէտք է ծածկել և երկու օր ու գիշեր տաք տեղ դնել։ Եթէ 36—48 ժամից յետոյ, այդ ջրի մէջ բամբականման կամ կաթնանման ծիւեր յայտնուին, ուրեմն այդպիսի ջուրը իր մէջ օրգանական մարմիններ ունի, որը և գործածելու անպէտք է։ Իսկ եթէ այդքան ժամանակամիջոցում ջուրը իր պարզութիւնը պահպանել է, գործածելու համար անվնաս է և պիտանի։

—

Ապակեայ ամանները մաքրելու կերպը.—Ապակէ ամանները այլ և այլ կերպիւ կարելի է մաքրել, նայելով թէ ինչից են աղտոտուել։ Կաթնոտ, սերոտ և իւղոտ շիշերը, կրաջրով կամ տաք մոխրաջրով կարելի է մաքրել. բուսական իւղերով աղտոտուածները աւելի կալաքարով (պօտաշ) քան մոխրով։ Եթէ շշին դիրտ է կպած, որը չի պոկւում ջրով, պէտք է թունդ—բարկ քացախով լուանալ, եթէ այս ես չօգնի՝ պէտք է աղէթթուար (соляная кислота) համահաւասար քաշ հասարակ ջրով լուանալ, որից յետոյ մաքուր և տաք ջրով ես ողողելու է։ Քարածուխի մոխիրն ես, ամեն տեսակ ախտոտած ապակիններ մաքրելու համար լաւ է, միայն թէ բարակ լինի ծեծած և ոչ խոշոր։





Ամերիկացի օրիորդ

ԱԼԼԻՍ ԲԼՕԿՈՒԷԼ

(«Մայր-Արաքսին» անգլիերէն թարգմանողը)

# X. ԽՈՀԱՆՈՑ

**Մորու—Մալինայի քաղցրաւենի.**—Երեք բաժակ ջոկած-ընտրած մալինային՝ պէտք է վերցնել երկու այդչափ, այսինքն 6 բաժակ շաքար, որը կէս բաժակ հաղարճի հիւթի մէջ բաց անելով և անդադար խառնելով եփում են մինչև շարապը (սիրօպ) թանձրանայ։ Յետոյ այս շարապի մէջ մալինան լցնում են և թողնում որ երկու անգամ եփ գայ, միայն շուտ-շուտ փրփուրը քաշելով։ Կրակից վեր առնելուց յետոյ ածում են ապակեայ ամանի մէջ և կրկին շարապը եփ տալով ածում պտուղների վրայ։

—

**Սև կեռասի (վիշնեայ) քաղցրաւենի.**—Որքան մաս կեռաս վերցնուի, այնքան ամեն մի մասին 1/4, այսինքն ամեն մի գրուանքին մէկ քառորդ գրուանքայ շաքարից պէտք է շարապ պատրաստել, կեռասները մէջը լցնելով պէտք է շուտ-շուտ փրփուրը քաշել, կրակից վերցնելուց յետոյ էլ հարկաւոր է ամանը շարժել և մի փոքր ժամանակ այդպէս թողնել։ Դրանից յետոյ կրկին ամանը կրակին դիր, եռացրու, փրփուրն քաշիր, կրկին կրակից վեր առ, թող մնայ և վերջապէս կրկին դիր կրակին և մինչև պատրաստուելը շարունակ եփիր։

—

**Վարդից շինած խմիչք.**—Առաջ շաքարից պատրաստիր շարապ, որը ոչ թանձր և ոչ նոսր լինի, այդքան մասին երկու մաս վարդի ծաղիկ լցրու մէջը և այնքան եփիր, որ բոլորովին թանձրանայ, յետոյ մի կիտրոնի հիւթ քամիր մէջը և երկու անգամ եփ տուր։ Սրանից յետոյ շարապը սառչելուց, կէս շտօֆ ֆրանսիական օղի և մի շիշ սպիտակ գինի լցրու և երկար ժամանակ թող մնայ։ Ճաշակից համեմատ քաղցրացրու, լցրու շշերի մէջ և սառցի մէջ պահիր։



# XI. ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՐԿՈՒ ԳԼԽԱՆԻ ՕՁ.—Այս օձը Միջին Աֆրիկայից Ամերիկա է բերել Ֆիշեր անունով գիտնականը և այժմ գտնւում է Նիւեօրկ քաղաքում։ Սա պատկանում է օձերի Heterodoumo Simus ցեղին։ Ունի չորս փայլուն աչք. Թէև երկու գլուխը վզից ցածր է բաժանւում, բայց ընդհանուր կազմը ուղիղ, առողջութիւնը տեղը և ոյժեղ է։ Իր տիրոջը լաւ է ճանաչում, և երբ տէրը մօտենում է նրա ապակուց շինուած (բնին)—բոյնին, նա անմիջապէս յարձակւում է երկու գլխով կերակրին, որը լինում է կաթը, եփած միս և եզան արիւն։ Կերակուրը երկու գլխին—երկու բերանին միասին և միանգամից է տրվում, միաժամանակ ուտելու համար, որպէս զի չկռուեն։ Մէկ գլուխը, միւսից աշխատում է խլել կերակուրը և շատ անգամ միմեանց կծում են։ Այս առաջին օրինակն է որ բնութեան մէջ այսպիսի հրեշը այսքան երկար ապրում է, որովհետև այսպիսիները մեծ մասամբ ծնւում են մեռած, կամ ծնուելուց յետոյ շուտով մեռնում են։

—

ՀՈՒՆՁԸ ԵՐԿՐԱԳՆԴԻՍ ՎՐԱՑ.—Ոչ մի ամիս չ՚կայ տարուայ մէջ որ հունձը չ՚լինի երկրագնդիս մի որ և է տեղում։ Յունվարին՝ երբ մեր երկիրը ձիւնով է ծածկուած, Աւստրալիայում և Նոր-Զելանդիայումն են հնձում։ Փետրվարին՝ հունձը սկսվում է Հնդկաստան և վերին Եգիպտոս։ Մարտին՝ Ներքին Եգիպտոս հունձը վերջանում է։ Ապրիլին՝ Պարսկաստան, Փոքր-Ասիայի մի քանի տեղերում և Մեկսիկայում։ Մայիսին՝ Ալ-

ժերիա և Միջին-Ասիա, Չինաստան և Եապոնեա։ Յունիսին՝ Յունաստան, Վենգրիայ, Իտալիայ, Իսպանիայ, Պորտուգալիայ և Ամերիկայի Միացեալ-Նահանգներում։ Յուլիսին՝ Գերմանիա, Աւստրիա, Ֆրանսիա, Շվէյցարիա Ռուսիա և Անգլիա։ Օգոստոսին՝ Բելգիա, և Հոլանդիա։ Սեպտեմբերին՝ Շոտլանդիա, Շվեցիա, և Նորվէնգիա։ Հոկտեմբեր՝ Հիւսիսային Շոտլանդիայում, հունձը վերջացնում են։ Նոյեմբեր և դեկտեմբերին՝ Հիւսիսային Աւստրալիա Հարաւային Աֆրիկա և Վեստ-Ինդիա։

---

ՂՊՏԱՑ ՄԻ ՀԻՆ ՁԵՌԱԳԻՐ. ԵՆ ԳՏԵԼ. — Այդ ձեռագիրը Եփեսոսի ս. ժողովի ժամանակ 431, Թէոդոս II կայսրի մօտ գտնուած, Երուսաղեմայ նշանաւոր պատրիարք ս. Կիւրեղի, իր փոխանորդին, Եփեսոսից՝ Կ. Պոլիս գրած մի շարք նամակներն են։ Եթէ, ընդունենք որ Եփեսոսի ս. ժողովում հաստատուեցաւ Յիսուս-Քրիստոսի Աստուածային և մարդկային անբաժան էյութիւնը, դորանից պէտք է եզրակացնել որ այդ նոր գտնուած ս. Կիւրեղի նամակ—ձեռագրերը, որքան թանգագին են։

---

ԿԱՅԾԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ՓԱՍԻԱՆՆԵՐԻ (ՖԱԶԱՆ) ՎԸ-ՐԱՅ.—Պրօֆ. Րօօպը այս մասին հետևեալ հետաքրքիր տեղեկութիւնն է յայտնում «ամեն մի շշուկ կամ ձայն եթէ նոյն իսկ շատ հեռու տեղից լինի, փասիաններին անհանգստացնում է և ճչելու տեսակ, ինչպէս հաւերը նրանք կանչում են»։ Բացի սորանից պ. Րօօպի քննութիւնից երևաց որ անգղիական հինգ մըլ հեռաւորութիւնից ձգուած թնդանօթի որոտին—ձայնին, փասիանները արձագանք էին տալիս։ Փասիանների սուր լսելիքի, անսովոր հոտառութեան և կայծակի ազդեցութեամբը բարձրաձայն ճչալու մասին, սրանից 60 տարի առաջ, 1837 թ. գրել էր գիտնական Վատերտօնը» Իսկ անգղիացի Գիլբէրտ



Բրայտ յայտնի գիտնականը, սրանից հարիւր տարի առաջ է յայտնել իր դիտողութիւնները այդ մասին.

---

ՄԿՆԵՐԻ ՅԱՐՁԱԿՈՒՄԸ ՄԱՐԴՈՒ ՎՐԱՅ.—«Petit journal»-ը հաղորդում է, որ Փարիզի Թղթակից Աւգուստ Կրեզէն, որը 58 տարեկան էր և կրծքի հիւանդութեամբ էր տանջւում, որին վերջերս աւելացել էր և անդամալուծութիւնը, իր սենեակում մեռած գտան։ Թշուառը իր մահճակալի վրայ ընկած էր, ձեռքերով երեսը ծածկած, ամբողջ փորը, ուսերը և ձախու կողը մկները կրծեր էին, որոնք երևի ահագին թւով էին յարձակուել անպաշտպան մեռնողին վրայ։

---

ՄԱՐԴՈՒ ԲՆԱԿԱՆ ԵՐԿԱՐԱԿԵՑՈՒԹԻՒՆԸ.—Առհասարակ ընդունուած է 72 տարին, թէև մարդիք մինչև 160—180 րուան էլ են ապրում։ Ամենախորին ծերութեան հասնողները երկրագործութեամբ պարապողները և հոգևորականներն են։ Իսկ ամենակարճ ապրողները, գործարաններում ծառայողները, և բժշկականութեամբ պարապողները։

---

ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒ ՈՐԴՈՑ ՄԱՅՐ.—Մեզ գրում են. Վեննայի բժշկական շաբաթաթերթում, ուշադրութեան արժանի հետեւեալ տեղեկութիւնը կայ։ Նոյէլախէն գիւղի մի աղքատ կտաւագործի կին Մարի Աննա Հելմը, իւր ծննդեան 40-րդ տարում լոյս աշխարհ է բերել 32 կենդանի զաւակներ, որոնցից 26 հոգի տղայ են եղել և 6 աղջիկ։ Ծննդաբերութիւնը տեղի է ունեցել հետևեալ կարգով, առաջին անգամ բերել է միանգամից 4 տղայ, երկրորդ անգամ 3, երրորդ անգամ 4, չորրորդ անգամ 2, հինգերորդ անգամ 3, վեցերորդ անգամ 2, եօթերորդ անգամ 3, ութերորդ անգամ 3, իններորդ անգամ 2, տասներորդ անգամ 3 և տասնևմէկերորդ անգամ 3.

---

ՉԻՆԱԿԱՆ ՃԱՇ.—Սեղանի վրայ դարսած է լինում.—1, Մանր կտրտած նարինջ, 2, մանր ջարդած տանձ, 3, դառն նուշ, 4, բոված ընկոյզ, 5, բադի մանր կտրտած ազդրեր, 6, ամուր խաշած և կանաչ գոյնով ներկած ձուաներ, 7, խոզի միս, պղպեղ, աղ, շաքար և ճապոնական սօուզ իւրաքանչիւրի սպասի (պրիբոր) առաջ։ Միմեանց մատուցանելու կերակուրներն են—1, ծովային կրիայ, 2, տապակած բադ, 3, ծեծած աղաւնի՝ ապուխտը հետը, 4, ծիծեռնակների բներից եփած արգանակ (սուպ) 5, դառան միս բամբուկի (եղէգն) շառաւիղներով, 6, խխունջ, 7, տապակած խեցգետին, 8, եփած ձուկ, թէյ և այսպէս կոչուած հազար յարկանի կարկանդակներ, 9, հաւ և ապուխտ 10, կրիայի մսից արգանակ, որի մէջ լողում են ճարպի կտորներ, 11, շան ծեծած միս, 12, տապակած կատու, 13, խորոված մուկ, 14, աղը դրած ձուեր, 15, ապուխտ, բանջարեղէնով համեմած, 16, բրնձի գնտակներ, 17, սեխի կորիզներ և այլն։

---

ԼԵՏԱՐԳԻԱԿԱՆ ՀԱԶՈՒԱԳԻՒՏ ՔՈՒՆ.—Տեննէլ գիւղի մէջ, որը մի քանի կիլոմէտր հեռու է Սան-Կանտէնից, 13 տարիներից ի վեր քնած է, Մարգարիտ Բոյէնվալ անունով 32 տարեկան մի աղջիկ։ Նա լէտարգիային ենթարկուել է ջղային սաստիկ ցընցումից։ Շարկօ Բրուարտէլ և այլ պրոֆէսորները հետաքրքըրուելով այդ հազուագիւտ երևոյթով, մի քանի անգամ գնացել են Տեննէլ, հետազօտութիւն կատարելու։ Խեղճ աղջիկը շատ նիհարել է ու դեղնել և աւելի նման է մեռածի քան կենդանի մարդու։

---

ՓԱՐԻԶԻ ՓՈՐԸ.—Փարիզցիք ուտում են տարեկան 3,000,000 եզը, 220,000 հորթ, 250,000 խոզ, 1,800,000 ոչխար, ընդամենը 180,000,000 քիլօգրամ միս։ Բացի այս Փարիզի կենտրոնական շուկայում (Les Halles) ծախւում է տարեկան երկու միլիօն քիլօ ձուկ, երեք միլիօն աղաւնի, ութ միլիօն հաւ, 2,784,000 ճագար, 800,000 բադ, 279 միլիօն ձու։ Օտար երկիրներից Եգիպտոսը տարեկան ուղարկում է Փարիզ 150,000 կենդանի լոր, Գերմանիան 160,000 նապաստակ, Աւստրիան և Սիլեզիան 250,000 սարեակ, Անգլիան և Բոհեմիան 25,000 փասիան և այլն։ Բայց աւելի շատ խմում են փարիզեցիք. տարեկան գործ է ածւում Փարիզում 90 միլիօն լիտր կաթ, 200,000 հեկտոլիտր սիդր, 275,000 հեկտոլիտր գարեջուր, 140,000 հ. սպիրտ և 5 միլիօն հեկտոլիտր գինի։ Իւրաքանչիւր փարիզեցի խմում է տարեկան միջին թուով 212 լիտր գինի. Ֆրանսիական քաղաքներից միայն Նիցցան է, որ Փարիզից անց է կացել այս մասումը։ Նիցցայի ամեն մի բնակիչ տարեկան խմում է 293 լիտր գինի, այսինքն 81 լիտր փարիզեցիներից աւելի։



---

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՏԷՐՈՒԹԵԱՆՑ ՈՒՆԵՑԱԾ ՆԱՒԵՐԸ, ԵՒ ՆՐԱՆՑ ՈՅԺԸ։

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Անգլիան | ունի | 5,471 | շոգենաւ | 9,751 | առագաստ. | 5,369,952 |
| Գերմանիան | » | 761 | » | 1,480 | » | 762,915 |
| Ֆրանսիան | » | 488 | » | 1,573 | » | 500,545 |
| Իսպանիան | » | 349 | » | — | » | 291,259 |
| Իտալիան | » | 205 | » | 2,010 | » | 199,153 |
| Նորվեգիան | » | 440 | » | 3,419 | » | 221,202 |
| Հոլանդիան | » | 481 | » | — | » | 171,175 |
| Ռուսաստանը | » | 313 | » | 3,105 | » | 140,036 |
| Շվէյցարիան | » | 336 | » | 1,481 | » | 124,177 |
| Դանիան | » | 215 | » | 857 | » | 112,652 |
| Աւստրիան | » | 114 | » | 289 | » | 100,567 |
| Բելգիան | » | 59 | » | 747 | » | 77,092 |
| Տաճկաստանը | » | 11 | » | 541 | » | » |

# XII. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ

## I.

ԵՐԿՐԱԳՆ. ՄԱԿԵՐԵՒՈՅԹԸ 509,950,714 քառակ. կիլօմետր է։

ՑԱՄԱՔԸ երկրագնդիս մօտ 1/3 մասն է կազմում—2,468,804 հող 6,802,634 ջուր։

ՈՎԿԻԱՆՈՍՆԵՐԻ ՄԻՋԻՆ ԽՈՐՈՒԹԻՒՆԸ.—Ատլանտեանը 3,790, Հնդկականը՝ 3,444. Մեծ-խաղաղականը՝ 4003, Հարաւային կիսագնդինը 3,390 մետր։

ՆՇԱՆԱՒՈՐ ԼԵՌՆԵՐԻ ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆԸ.—Էվերէստ 29,000 ոտնաչափ, Դավալագիրի 25,171, Էլբօրուս 18,000, Արարատը 17,000, Կազբէկը 16,000, Արագածը 13,500։

ՆՇԱՆԱՒՈՐ ԳԵՏԵՐԻ ԵՐԿԱՐՈՒԹԻՒՆԸ Միսիսիպին 5,890 կիլօմետր, Նեղոս 5,640. Ամազոնը 5565, Եանգ-Ցէ-կիանգը 5,410, Օբը 4,230, Ամուրը 4,155, Վոլգան 3,500, Դանուբը 3,042, Դոնը 1,807, Ուրալը 1,520, Րէյնը 1,370, Սէնան 600, Թեմզան 325 կիլօմետր։

ԼՈՒՍՆՈՅ ՀԵՌԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ԵՐԿՐԻՑ 362,334 վերստ է։ Լուսնոյ չափը երկրէցս 50 անգամ փոքր է։

## II.

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԵԱՆՔԻ ՄԻՋԻՆ ԹԻՒԸ։

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Մինչև | 60 տ. | հասն. են | 100-ից | 6 | մարդ |
| » | 80 » | » | 500 | 1 | » |
| » | 100 » | » | 1000 | 1 | » |

Մեռնում են տարէնը 33 միլ. այսինքն ամեն օր 96 հազար մարդ, ամեն մի ժամում 3730 մ. ամեն մի րոպէում 60. մի վայրկեանում մի հոգի։

Ծնւում են ամեն տարի 42 միլ. այսինքն 9,500,000 աւելի, քան մեռնում են։

Պսակւում են 82 միլ., 120 մարդուն մի պսակ է գալիս։

ՊՍԱԿՈՒԱԾԸ ԵՒ ԱՄՈՒՐԻՆ. — Ըստ բժիշկ Կեների, ամուսնացած մարդը աւելի հեշտ 60 տարուան կհասնի, քան թէ ամուրին 45 տարուան. պսակուածների 1/4 մասն է ապրում մինչև 70 տարի, իսկ ամուրիների 1/20 մասն է հասնում։ Ամուսնացածների երկարակեցութիւնը, ընտանեկան կեանքի պայմանների առաւելութիւններով է բացատրւում։

ՄԱՐԴՈՒՍ ՄԱՐՄԻՆԸ ունի մօտաւորապէս 3,831,248 ծակոտիք և ամեն մի քառակուսի դիւյմի վրայ գալիս է՝ ճակատին 1,258, կզակներին 548, վզին 1,303, կրծքին 1,136, ծոծրակին 417, ձեռքի ափին 2,736, մատներին 1,740, ոտի ներբանին 2,685։ Ամառուայ շոգ օրը մարդուս մարմնից, այս ծակոտիքներից դուրս է հոսում 15—20 կիլօգրամ ջուր,—քրտինք, թուք, արցունք և այլն։

ՄԱՐԴՈՒ ՄԱԶԵՐԻ ԹԻՒՆ Է ՄՕՏ 127,920։

ՈՐՔԱ՞Ն Է ՈՒՏՈՒՄ ՄԱՐԴՍ. Մինչև 70 տարին հասած մարդը, ուտում է 20 վագոնից աւելի կերակուր, այսինքն մօտ 80,000 կիլօ. 25,550 օրում։



## III.

ԵՐԿՐԱԳՆԴԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ։

Երկրագնդիս վերայ բնակւում են մօտ 1,562 միլիոն բնակիչ, որոնցից Եւրոպայում 366 միլ., Ասիայում 860 միլ, Աֆրիկայում 206 միլ. Ամերիկայում 125 միլ. և Աւստրալիայում 5 միլիոն։

Երկրագնդիս ազգերը խօսում են 3600 լեզուից աւելի։

Բոլոր կրօնները երկրագնդիս վերայ 1000-ից աւելի են։

ԵՒՐՈՊԱՅԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ ՑԵՂՈՎ։

ՍԼԱՎԵԱՆՆԵՐՆ են 94,355,000—(սրանցից 65 միլ. ռուսներ և ռումիներ, 11 միլ. լեհեր, 7 միլ. չեխեր, մօրաւներ, 10 միլ. սերբխացիք, բուլղարներ և կրօատներ)։ ՌՕՄԱՆԱԿԱՆ ԿԱՄ ԼԱՏԻՆԱԿԱՆ ԱԶԳԵՐԸ — 98,948000 հոգի։ (Սրանցից ֆրանսիացիք 40 միլ. իտալացիք 30 միլ. սպանացիք և պօրտուգալացիք 23 միլ. ռումանացիք 9 միլ.։ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԱԶԳԵՐ—115,130,000. (սրանցից գերմանացիք և հօլանդացիք 63 միլ. անգլիացիք 40 միլ. սկանդինաւեցիք 9 միլ.)։—ՀԱՅԵՐԸ 5 միլիոն են։ Հրէաները մօտ 9 միլիոն։ Կրօնով ամբողջ երկրագնդի վերայ, ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐԸ—

| | | |
|---|---|---|
| Կաթոլիկներ . . . . . . | 245 միլ. | 490 |
| Բողոքականներ. . . . . | 140 » | |
| Ուղղափառներ. . . . . | 91 » | |
| Այլ և այլ քրիստ. . . . | 10 » | |
| ՄԱՀՄԵԴԱԿԱՆՆԵՐ. . . | — » | 171 |
| ՀՐԷԱՆԵՐ . . . . . . . | — » | 9 |
| ԿՌԱՊԱՇՏՆԵՐ . . . . | | |
| Բուդդայականներ. . . . | 500 » | 891 |
| Բրամինականներ . . . . | 146 » | |
| Ֆետիշներ . . . . . . . | 245 » | |
| Ընդամենը. . . . . . . . | | 1561 |

## IV.

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ համարւում են, Լօնդոն 5,190,000 բնակիչ, Պեկինը 4,500,000, Փարիզ 2,228,806, Վիեննան 1,136,270, Բերլին 1,125,000, Կ. Պօլիս 830,000, Նէապօլ 450,000, Պետերբուրգ 929,000, Մոսկուայ 754,103։

ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻ ԹԻՒԸ։ Ռուսաստանում—9, Իտալիայում—21, Գերմանիայում—20, Ֆրանսիայում—14, Անգլիայում—12, Իսպանիայում—10, Հոլանդիայում—3, Շվէյցարիայում — 3, Շվէցիայում—2, Ռումանիայում—2։

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ։ Եւրոպայի վեց մեծ պետութեանց.—Պրուսիայինը 316 միլ. ֆրանկ. Աւստրիայինը 319, Իտալիայինը 382, Ֆրանսիայինը 797, Անգլիայինը 746, Ռուսաստանինը 620։ Ընդամենը 3078 միլիոն։

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԶՕՐՔԸ (նշանաւոր տէրութեանց) խաղաղ ժամանակ 3,263,474 հոգի։ Ռուսաստանում 876,838 հ. Ֆրանսիայում 512,472 հ. Գերմանիայում 491,840, Աւստրիայում 290,106, Իտալիայում 240,915, Անգլիայում 221,358, Տաճկաստանում 182,000, Իսպանիայում 131,400, Շվեցիայում 33,020 հոգի։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ Եւրոպայի միայն հինգ մեծ տէրութեանց զօրքերի թիւը հասնում է մինչև 21,000,000 միլ.

ԵՒՐՈՊԱՅԻ ԾՈՎԱՅԻՆ զօրքը բաղկացած է 191,000 հոգուց։

Երկաթուղիների գիծը Եւրոպայում մօտ 268,593 կիլօմետր է։

Հեռագրաթելի երկարութիւնը Եւրոպայում 1,740,698 կիլօմետր։

# XIII. ՔԱՂԱՔԱԿԱՆ

## ԵՐԿՐԱԳՆԴԻՍ ՆՇԱՆԱՒՈՐ ՏԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ և ԱԶԳԵՐԸ ԻՐԱՆՑ ԵՐԿՐՆԵՐՈՎ։

| | Անուններըː | Տիրապետող կրօնըː | Պետութեան գլուխըː | Տարածու-թիւնը ք. քիլ. | Բնակչաց թիւըː | Մայրաքա-ղաքներըː |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Արաբիա | Մահմեդական | Նահապետական | 2,300,000 | 3,000,000 | Սիվան |
| 2 | Արգենտին. Հան. | Քրիստոնեակ. | Նախ. Լուիս Պենա | 2,835,969 | 4,000,000 | Բուր-Այերօս |
| 3 | Անամ | Անգղ. եկեղ. | Մեորիք Տամ-Տայ | 230,000 | 21,000,000 | Գուէյի |
| 4 | Անգլիա | » » | Վիկտորիա կայս. | 314.628 | 36,000,000 | Լօնդոն |
| | » գաղթակ. | » » | » » | 24,964,096 | 180,000,000 | |
| 5 | Աւստրօ-Հունգ. | Կաթոլիկ | Ֆրանց-Յովսէփ | 676,667 | 38,000,000 | Վիեննա |
| 6 | Աւղանստան | Մահմեդական | Աբդուռահման | 550,660 | 4,000,000 | Քաբուլ |
| 7 | Բելուճստան | Մահմեդական | Միր-Խոդադադ | 315,015 | 350,000 | Գելաթ |
| 8 | Բելգիա | Կաթոլիկ | Լեօպոլդ II. թագ. | 29,457 | 6,000,000 | Բրիւսէլ |
| 9 | Բուլղարիա | Օրթոդոքս | Ֆերդինանդ իշխ. | 99,873 | 5,001,090 | Սօֆիա |
| 10 | Բրազիլիա | Կաթոլիկ | Նախ. Ֆ. Պէյիխս. | 8,337,213 | 15,000,000 | Րիօ-Ժանէյրօ |
| 11 | Բուխարա | Մահմեդական | Սէիդ-Աբդուլ Էմ. | 239,000 | 2½ միլ. | Բուխարա |
| 12 | Գերմանիա | Աւետարանա. | Վիլհելմ II. | 540,418 | 60 » | Բերլին |
| 13 | Հաբեշստան | Հայադաւան | Մենելիք II. | 508,280 | 5 » | Գոնդար |
| 14 | Հոլանդիա-գաղ. | Բողոքական | Վիլհելմ III. | 2,036,291 | 4½ » | Հագա |
| 15 | Յունաստան | Օրթոդոքս | Գէորգ I. | 68,688 | 2 » | Աթէնք |
| 16 | Դանիա | Լիւտերական | Քրիստիան. IX. | 232,302 | 2½ » | Կոպէնհագէն |
| 17 | Եգիպտոս | Մահմեդական | Աբբաս-փաշա | 994,600 | 7 » | Գահիրէ |



| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 18 | Իսպանիա և գաղ. | Կաթոլիկ | Ալֆօնս III խնամ. | 1.633,817 | 27 միլ. | Մադրիտ |
| 19 | Իտալիա | Կաթոլիկ | Հումբերտ I. | 286,588 | 30½ » | Հռոմ |
| 20 | Չինաստան | Կռապաշտ | Կվանգ-սու | 11,574,356 | 403 » | Պեկին |
| 21 | Կոլումբիա | Կաթոլիկ | Ռաֆ-Նունեզ | 1,118,100 | 4 » | Բոգօտա |
| 22 | Կօնգօ | » | Բելգ. (թագ.) | 2,735,158 | 17 » | Բօմա |
| 23 | Ռուսաստան | Օրթոդոքս | Նիկոլայ II կայսր | 20,666,445 | 115 » | Ս. Պետերբուրգ |
| 24 | Կորէյա | Կաթոլիկ | Թուեջի | 218,192 | 10½ » | Սէուլ-(Կեօնգ) |
| 25 | Մեքսիկա | Կաթոլիկ | Նախագ. Դիազ | 1,946,292 | 11 » | Մեքսիկա |
| 26 | Մարօկօ | Մահմեդական | Մուլէյ-Հասան | 816,000 | 8 » | Ֆէզ |
| 27 | Պարսկաստան | Մահմեդական | Մուզ.-էդին-Շահ | 1,648,125 | 9 » | Թեհրան |
| 28 | Պերու | Կաթոլիկ | Նախ. Բերմուդէս | 1,049,970 | 3 » | Լիմա |
| 29 | Պորտուգալիա | Կաթոլիկ | Դոն-Կարլօս թագ. | 89,143 | 5 » | Լիսաբոն |
| 30 | Ռումինիա | Օրթոդոքս | Կարլօս | 129,947 | 6 » | Բուքրէշ |
| 31 | Սերբիա | Օրթոդոքս | Աղէքսանդր I. | 48,586 | 2 » | Բելգրադ |
| 32 | Սիամ | Բուդդայական | Ջուլալոնգկորն | 726,550 | 9 » | Բանկոկ |
| 33 | Միացեալ-Նահ. | Քրիստոնեա. | Կլիվլենդ | 9,668,272 | 62 » | Վաշինգտօն |
| 34 | Տաճկաստան | Մահմեդական | Աբդուլ-Համիդ II. | 2,061,224 | 21 » | Կ. Պոլիս |
| 35 | Ֆրանսիա և գաղ. | Կաթոլիկ | Նախագահ Ֆօր | 3,996,038 | 76 » | Փարիզ |
| 36 | Ղարադաղ | Օրթոդոքս | Իշ. Նիկոլայ | 9030 | ¼ » | Ցեթինէ |
| 37 | Չիլի | Կաթոլիկ | Նախ. Դոն-Մոնտ | 753,216 | 3 » | Սան-Թիագօ |
| 38 | Շվէյցարիա | Բողոքական | Նախ. Կարլ-Շենկ | 41,346 | 3 » | Բերն |
| 39 | Շվէցիա-Նորվեգ. | Լիւտերական | Օսկար II. | 775,996 | 7 » | Շտօգհոլմ |
| 40 | Էկվատոր | Կաթոլիկ | Նախ. Կորտէրօ. | 650,937 | 1½ » | Կվիտօ |
| 41 | Ճապօնիա | Սինտօյի օրէն | Մուցու-Խիտօ կայ. | 382,447 | 40 » | Տօկիօ |



Պարսից Շահ ՄՈՒԶԱՖԷՐ-ԷԴԻՆԸ

# XIV. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ

## 1) ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՒ ԿՈՎԿԱՍԻ ՄԻ ՔԱՆԻ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՀԵՌԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ՝

### ՏՓԽԻՍԻՑ

| | Վերստ |
|---|---|
| Աքսաթուման | 210 |
| Ագուլիս | 422 |
| Ալեքսանդրապոլ | 243 |
| Արդահան | 387 |
| Ասխաբադ | 1308 |
| Ախալցխա | 186 |
| Արխանգելսկ | 3248 |
| Ախալքալակ | 248 |
| Բագու | 517 |
| Բլագովեշչենսկ | 8766 |
| Բուխարա | 1853 |
| Գանձակ | 182 |
| Եկատերինոդար (Կուբ.) | 809 |
| Բաթում | 330 |
| Բորժոմ | 140 |
| Գորի | 71 |
| Գրօզնոյ | 190 |
| Դերբենդ | 599 |
| Եյսկ | 851 |
| Եկատերինոսլավ | 1417 |
| Երևան | 264 |
| Եակուտսկ | 9264 |
| Զաքաթալա | 192 |
| Էջմիածին | 282 |
| Թելաւ | 93 |
| Լանքարան | 569 |
| Կաղզուան | 415 |
| Հին-Նախիջևան | 422 |
| Հաշտարխան | 2735 |
| Ղզլար | 441 |
| Ղուբա | 674 |
| Մասիս | 334 |
| Մոզդոկ | 288 |
| Նոր-Բայազէդ | 231 |
| Նուխի | 160 |
| Շամախի | 398 |
| Թեմըր-Խան-Շուրա | 456 |
| Ժիտոմիր | 1988 |
| Իրկուտսկ | 6520 |
| Լիւբլին | 2414 |
| Խարկով | 1393 |
| Խերսոն | 1508 |
| Կալիշ | 2863 |
| Կամենեց-Պոդոլսկ | 2179 |
| Ղարս | 346 |
| Կիէվ | 1859 |

| | |
|---|---|
| Կաստրոմա | 2372 |
| Կովնօ | 2437 |
| Կուրսկ | 1532 |
| Հէլսինգ-Ֆորս | 3041 |
| Ղափան | 234 |
| Մոսկվա | 20160 |
| Նիժնի-Նովգորոդ | 2262 |
| Նիկոլայեվսկ | 10,510 |
| Նովգորոդ | 2529 |
| Նովո-Չերքասկ | 902 |
| Նոր-Նախիջևան | 941 |
| Ուրալսկ | 2490 |
| Ուֆա | 2622 |
| Չերնիգով | 1830 |
| Պենզա | 1945 |
| Պետերբուրգ | 2623 |
| Պերմ | 2917 |
| Պալտավա | 1494 |
| Պսկով | 2578 |
| Ռեվէլ | 2223 |
| Շուշի | 345 |
| Պետրովսկ | 499 |
| Պեատիգորսկ | 407 |
| Ջուղա | 461 |
| Սալեան | 443 |
| Սևան | 200 |
| Սղնախ | 100 |
| Տաթև | 433 |
| Փոթի | 286 |
| Ռեազան | 1834 |
| Ռիգա | 2701 |
| Ռոստով (Դոնի վերայ) | 939 |
| Սամարա | 2128 |
| Սարատով | 1716 |
| Սիմբիրսկ | 2134 |
| Սիմֆերոպոլ | 1222 |
| Սմրղանդ | 2207 |
| Ստավրոպոլ | 550 |
| Վարշավա | 2584 |
| Վիլնօ | 2536 |
| Վլադիկավկազ | 201 |
| Վլադիմիր | 2200 |
| Վլադիվոստոկ | 10,644 |
| Վորոնէժ | 1462 |
| Տաշկէնդ | 2490 |
| Տուլա | 1910 |
| Քիշինև | 1878 |
| Քութայիս | 202 |
| Օմսկ | 4065 |
| Օրենբուրգ | 2522 |
| Օրեօլ | 1764 |

**2) ԿՈՎԿԱՍԻ ՔԱՂԱՔՆԵՐԻ ԴԻՐՔԸ ԵՒ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԹԻՒԸ։**

| Քաղաքները | (ոտնաչ). Բարձր. ծ. մակեր. | Բնակիչ. թիւը։ |
|---|---|---|
| Տփխիս. . . . . . . . . | 2400 | 165,024 |
| Բագու. . . . . . . . . | — | 85,679 |
| Եկատարինոդար . . . | — | 67,610 |
| Ստաւրապոլ . . . . . | 2000 | 40,017 |
| Վլադիկաւկազ . . . . | 2346 | 46,981 |
| Շամախի . . . . . . . | 2230 | 28,545 |
| Մայկոպ . . . . . . . . | — | 27,945 |
| Եյսկ. . . . . . . . . . | — | 36,915 |
| Շուշի . . . . . . . . . | 5076 | 32,806 |
| Նուխի . . . . . . . . | 2454 | 27,757 |
| Ալեքսանդրապոլ . . . | 5079 | 23,670 |
| Գանձակ . . . . . . . | 1446 | 25,294 |
| Քութայիս. . . . . . . | — | 24,227 |
| Երևան. . . . . . . . . | 3229 | 24,555 |
| Դարբանդ. . . . . . . | — | 15,185 |
| Ղուբա. . . . . . . . . | 1988 | 14,730 |
| Թեմրիւկ. . . . . . . | 244 | 13,656 |
| Ախալցխա. . . . . . . | 3376 | 23,265 |
| Մոզդոկ . . . . . . . . | 465 | 13,989 |
| Բաթում. . . . . . . . | — | 23,878 |
| Սղնախ . . . . . . . . | 2593 | 10.069 |
| Ղզլար. . . . . . . . . | — | 8,778 |
| Նովորոսսիյսկ . . . . | — | 20,304 |
| Գէորգիեւսկ. . . . . . | 1032 | 11,290 |
| Թելաւ . . . . . . . . . | 2420 | 11,014 |
| Անապա. . . . . . . . | — | 11,604 |
| Նոր-Բայազէտ. . . . | — | 7,120 |
| Հին-Նախիջևան. . . . | 2949 | 7,911 |
| Գրոզնա. . . . . . . . | 419 | 6,214 |
| Գորի . . . . . . . . . | 2006 | 7,383 |
| Փոթի . . . . . . . . . | — | 5,785 |
| Արմաւիր . . . . . . . | — | 6,634 |
| Ախալքալակ . . . . . | 5545 | 5,303 |
| Պետրովսկա. . . . . . | — | 4,000 |
| Թեմիր-Խան-Շուրա . . | — | 3,356 |
| Կաղզուան. . . . . . . | 4968 | 3,298 |
| Թաման . . . . . . . . | 444 | 3,231 |
| Ղարս . . . . . . . . . | 6173 | 3,137 |
| Դուշէթ . . . . . . . . | — | 2,041 |
| Սուխում. . . . . . . . | — | 3,279 |
| Արդահան. . . . . . . | 6058 | 8,844 |
| Նոր-Նախիջևան . . . | — | 20,100 |

**3) ԿՈՎԿԱՍԻ ՄԻ ՔԱՆԻ ՏԵՂԵՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԵՐԸ։**

| Տեղերի անունները։ | Հիւս. լայն. | Արև. երկայն. |
|---|---|---|
| Ալեքսանդրապոլ. . . . . | 40°47 | 61°29 |
| Ախալցխա. . . . . . . . . | 41 38 | 60 38 |
| Ախալքալակ . . . . . . . | 41 25 | 60 08 |
| Բագու . . . . . . . . . . | 40 22 | 67 29 |
| Բորժոմ. . . . . . . . . . | 41 50 | 61 02 |
| Գանձակ . . . . . . . . . | 40 40 | 64 01 |
| Գէորգիեւսկ . . . . . . . | 44 08 | 61 08 |
| Գորի. . . . . . . . . . . | 41 59 | 61 46 |
| Գռոզնա . . . . . . . . . | 43 19 | 63 21 |
| Դիլիջան . . . . . . . . . | 40 44 | 62 32 |
| Դարբանդ. . . . . . . . . | 42 03 | 65 57 |
| Դուշէթ. . . . . . . . . . | 42 05 | 62 21 |
| Եկատարինոդար . . . . . | 45 01 | 56 37 |
| Երևան.. . . . . . . . . . | 40 10 | 62 10 |
| Էջմիածին . . . . . . . . | 40 09 | 61 57 |
| Թելաւ.. . . . . . . . . . | 41 55 | 63 08 |
| Թեմիր-Խան-Շուրա. . . . | 42 49 | 64 46 |
| Տփխիս . . . . . . . . . . | 41 43 | 62 27 |
| Լանքարան. . . . . . . . | 38 45 | 66 31 |
| Ղազբէկ . . . . . . . . . | 42 39 | 62 18 |
| Կողբ. . . . . . . . . . . | 40 03 | 62 10 |
| Ղզլար . . . . . . . . . . | 43 51 | 64 22 |
| Ղուբա. . . . . . . . . . | 41 21 | 66 10 |
| Մոզդոկ. . . . . . . . . . | 43 44 | 62 19 |
| Հին-Նախիջևան . . . . . | 39 12 | 63 04 |
| Նոր-Բայազէտ . . . . . . | 40 20 | 62 47 |
| Նովորոսսիյսկ . . . . . . | 44 42 | 55 26 |
| Նուխի . . . . . . . . . . | 41 12 | 64 51 |
| Շամախի . . . . . . . . . | 40 37 | 66 18 |
| Շուշի. . . . . . . . . . . | 49 49 | 65 24 |
| Պետրովսկա. . . . . . . . | 42 59 | 65 09 |
| Պեատիգորսկ . . . . . . . | 44 02 | 60 45 |
| Սևան. . . . . . . . . . . | 40 33 | 62 50 |
| Սղնախ. . . . . . . . . . | 41 36 | 63 34 |
| Ստաւրապոլ . . . . . . . | 45 03 | 59 38 |
| Վլադիկավկազ . . . . . . | 43 01 | 62 21 |
| Փոթի. . . . . . . . . . . | 42 08 | 59 19 |
| Քութայիս . . . . . . . . | 49 16 | 60 22 |
| Օրդուբաթ . . . . . . . . | 38 54 | 63 41 |



# ԱՂԻՒՍԱԿ

## ՈՐԸ ՑՈՅՑ Է ՏԱԼԻՍ ԸՍՏ ԹԻՖԼԻՍԻ ՄԻՋՕՐԷԱԿԱՆԻ, ԵՐԿՐԱԳՆԴԻ ՄԻ ՔԱՆԻ ՔԱՂԱՔՆԵՐԻ ԿԷՍ ՕՐՈՒԱՅ ԺԱՄԱՆԱԿԸ։

| | ժ. | ր. | վ. | |
|---|---|---|---|---|
| Ասխաբադ . . | 12 | 54 | — | ցեր. |
| Բաքու . . . . | 12 | 20 | 8 | » |
| Բաթում . . . | 11 | 47 | — | » |
| Վարշավ . . . | 10 | 24 | 52 | » |
| Վլադիկավկազ. | 11 | 59 | 28 | » |
| Գորի. . . . . | 11 | 57 | 12 | » |
| Եկատերինոդար | 11 | 36 | — | » |
| Գելսինգֆորս . | 10 | 40 | 36 | » |
| Գանձակ . . . | 12 | 6 | — | » |
| Իրկուտսկ (Սիբ.) | 3 | 57 | 52 | եր. |
| Քերչ. . . . . | 11 | 26 | 44 | » |
| Քութայիս . . | 11 | 41 | 40 | » |
| Կրասնովոդսկ . | 12 | 32 | — | » |
| Մերվ. . . . . | 1 | 8 | — | » |
| Մոսկուա . . . | 11 | 31 | 14 | » |
| Օդեսսա. . . . | 11 | 3 | 41 | » |
| Հաշտարխան . | 12 | 12 | 54 | » |
| Ստավրապոլ. . | 11 | 48 | 18 | ցեր. |

| | ժ. | ր. | վ. | |
|---|---|---|---|---|
| Ս.-Պետերբուրգ | 11 | 2 | — | ցեր. |
| Սուխում . . . | 11 | 44 | 52 | » |
| Թեմ. խան-շուրա | 12 | 9 | 12 | » |
| Թիֆլիզ . . . | 12 | — | — | » |
| Խարկով. . . . | 11 | 25 | 44 | » |
| Երևան . . . . | 11 | 48 | 48 | » |
| **Արտասահման** | | | | |
| Փարիզ . . . . | 9 | 10 | 8 | առ. |
| Լոնդոն . . . . | 8 | 58 | 8 | » |
| Մադրիդ . . . | 8 | 43 | 28 | » |
| Բերլին . . . . | 9 | 54 | — | » |
| Վիեննա . . . | 10 | 6 | — | » |
| Հռոմ. . . . . | 9 | 50 | 16 | » |
| Բրիւսէլ . . . | 9 | 18 | 8 | » |
| Կ. Պոլիս . . . | 11 | — | 8 | » |
| Շտոկհոլմ . . . | 10 | 12 | 8 | » |
| Պեկին . . . . | 4 | 50 | — | եր. |
| Նիւ-Եորկ . . . | 4 | 45 | — | եր. |



† ՅՈՎՀԱՆՆԷՍ ԽԱՏԻՍԵԱՆ



# XV. ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ

(Հասարակ պարտամուրհակի օրինակ)

Թիֆլիս, 1-ին Յուլիսի 1897 Թ.

Մուրհակ 1000 րուբլ. արժաթի

Յուլիսի մէկից, հազար ութհարիւր ինննսուն և եօթը ամի, երեք ամիս ժամանակով, այս իմ պարտամուրհակովս պարտաւորւում եմ վճարելու Թիֆլիզի 2-րդ կարգի վաճառական Յովհաննէս Մաթէոսեան Կիրակոսեանին կամ որին նա կը հրամայէ հազար ռուբլի արծաթ, որը ես նրանից ապրանքով ([illegible]) լիովին ստացել եմ։

Ստորագրութիւն — Տփխիսի քաղաքացի Պետրոս Պօղոսեան Նիկողոսեան։

---

ԴՐՈՒԱԳԱՒՈՐ ԹՂԹԵՐԻ ՀԱՐԿԸ

Տուրքհաչների

| Արժողութ. գումարը. | | | | Թերթի գինը |
|---|---|---|---|---|
| | | 50 | ր. | 10 |
| 50-ից | մինչև | 100 | » | 15 |
| 100 | » | 200 | » | 30 |
| 200 | » | 300 | » | 40 |
| 300 | » | 400 | » | 54 |
| 400 | » | 500 | » | 70 |
| 500 | » | 600 | » | 80 |
| 600 | » | 700 | » | 90 |
| 700 | » | 800 | » | 1— |
| 800 | » | 900 | » | 1,15 |
| 900 | » | 1000 | » | 1,20 |
| 1000 | » | 1500 | » | 1,40 |
| 1500 | » | 2000 | » | 2,50 |

| Արժողութ. գումարը. | | | | Թերթի գինը |
